



ԵՐԶԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՍՐՏԱՌՈՒՉ ԿՈՆԴԱԿԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 1914 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ  
ԿԱՐԳԱԴԻՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ Ա. ԷԶՄԻԱԾԻՆ  
ՀԱՍԱԾ ԹԵՎԱՌ ԵՎ ԱՆՕԹԵՎԱՆ ՀԱՅ  
ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Խոր հուզումով հրատարակում ենք երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Ե կաթողիկոսի 1914 թվականի 28 թվականի սրտառու կոնդակը «Օգնության կարգադիր Յանձնաժողով» մշակելու մասին, Արևմտյան Հայաստանից Սուրբ Էջմիածին հասած գաղթական հայության քնկորների անմիջական եղբայրական օգնություն հասցնելու նպատակով, գաղթականների, որոնք «փախեան ի սահման մեր և այսօր հազարաւոր թշուառ կանայք և անմեղ մանկունք և ծերք, ժողովեալք ի Ա. Էջմիածին, ընդ հովանեաւ Մայր Աթոռոյս, խնդրեն ի մէջ զօգնութիւն»:

1914 թվականին, իբրև նախանշան կամ սկզբնավորություն, Արևմտյան Հայաստանի արևելյան շրջանում արդեն սկսել էին արհավիրքները, իսկ 1915 թվականին, ինչպես հայտնի է, տեղահանությունը զանգվածային բնույթ էր ստացել և սկսվել հայ աղետյալների «սարսափահար և խելակորույս» փախուստը դեպի Արևելյան Հայաստան:

1914 թվականի ձմռան արհավիրքները սկզբնավորությունն էր գալիք՝ 1915 թվականի Մեծ եղեռնի:

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՏԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ  
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ  
ԷԶՄԻԱԾԻՆ

Գերապատիւ Տ. Եփրեմ, Տ. Բագրատ, Տ. Մատթէոս եպիսկոպոսաց եւ բարձրապատիւ Տ. Գաբեգին, Տ. Բաբգէն եւ Տ. Վրթանէս վարդապետաց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջո՛յն եւ օրհնութի՛ւն Հայրապետական:

Դարձեալ լսեմք ի Հայաստան աշխարհէ զողբս եւ զաղաղակս անօգնական եւ անպաշտպան սիրելի զաւակացս: Գիտէք արդէն, զի ի վերջին աւուրս յանկարծակի թշուառութիւնք եւ սոսկալի արհաւիրք եկին հասին ի

վերայ զառակացս, յորոց բազումք թողեալ զհայրենի տունս եւ զամենայն ստացուածս իրեանց ի Տաճկա-Հայաստանի եւ յԱտրպատականի, սարսափահար եւ խելակորոյս լեալ, փախեան ի սահմանս մեր եւ այսօր հազարատո թշուառ կանայք եւ անմեղ մանկունք եւ ծերք, ժողովեալք աստ ի Ս. Էջմիածին, ընդ հովանեաւ Մայր Աթոռոյս, խնդրեն ի Մէնջ զօգնութիւն:

Յանկացեալ Մեր ընդ փոյթ հասանել յօգնութիւն արկածելոց, դիմեցաք առ պարտաճանաչ հոգեւոր որդիս Մեր, յորոց ոմանք շարժեալ ի մարդասիրական վեհ զգացմանց, ազնուաբար արկին զլուսնայս իրեանց յազգային գանձանակ վասն փրկելոյ զկեանս արկածելոց եւ տառապելոց:

Արդ՝ անհրաժեշտ համարելով զկազմակերպումն քրիստոնէական օգնութեան վասն հազարատո զառակացս, այսու հայրապետական կոնդակաս նշանակեմք զՁեզ անդամս Կարգադիր Յանձնաժողովոյ Եղբայրական Օգնութեան ընդ անմիջական հսկողութեամբ եւ տնօրէնութեամբ Մերով եւ պատուէր տամք Ձեզ կատարել զչետագայս.

Ա) Փութով ժողովել ի մի զամենայն տեղեկութիւնս զհայ գաղթականաց, որք ի պատճառս ոռոս-տաճկական պատերազմի, թողեալ են զտունս եւ զստացուածս իրեանց եւ զտանին ի թշուառ կացութեան, ցրուեալք յայլ եւ յայլ տեղիս:

Բ) Բննել ի ձեռն մասնաժողովոց, ներկայացչաց եւ վստահելի անձանց զվիճակ նոցա եւ զհետեւանացն յայտ առնել Մեզ ի տնօրէնութիւն.

Գ) Մտանել ի բանակցութիւն ընդ Յանձնաժողովս Եղբայրական Օգնութեան. հաստատեալս կոնդակօք Մերովք ի զանազան քաղաքս, տալով նոցա զկարեւոր տեղեկութիւնս վասն գաղթականաց եւ խնդրելով ի նոցանէ զտեղեկագիրս գործունէութեան իրեանց, մատուցանել Մեզ ի գիտութիւն.

Դ) Միաւորել զգործունէութիւնս ամենայն Յանձնաժողովոց Եղբայրական Օգնութեան եւ, ի դէպս անհրաժեշտութեան, նախապէս ընկալեալ ի Մէնջ զկարեւոր հրահանգս, հրաւիրել աստ ի Ս. Էջմիածին զներկայացուցիչս նոցա ի խորհրդակցութիւն՝ վասն որոշելոյ զընդհանուր սկզբունս գործունէութեան յօգուտ գաղթականաց.

Ե) Խորհրդակցել պարբերաբար ընդ ներկայացուցիչս մերձակալ քաղաքաց եւ սահմանագլուխ առանց վասն կանոնաւորապէս պահպանելոյ եւ բնակեցուցանելոյ զգաղթականս ի շրջակայ զիւլօրայս, յայսմ ցրտագին եղանակի.

Զ) Խնամել ըստ ամենայնի եւ տալ նոցա զքժշկական օգնութիւնս, սփոփել եւ մխիթարել զնոսա հոգեպէս.

Է) Ստանալ ի Սինօդէ Ս. Էջմիածնի զժապատիւնեալ մատեան եւ պահել զամենայն հաշիւս կանոնաւորութեամբ եւ կանխագոյն թոյլտութեամբ Մերով ստանալ ի գանձապահէ Մայր Աթոռոյս զանհրաժեշտ դրամս ի նուիրատուեանց յօգուտ գաղթականաց:

Լիայոյս եմք, զի Դուք, որդեակք հոգեւորք, առաջի աչաց ունելով զողբալի եւ զյուսահատ վիճակ եւ զսոսկալի տառապանս գաղթականաց մերոց, գործեսցիք ամենայն եռանդեամբ եւ անձնուիրութեամբ ի թէթեւացումն ազգային աղէտից:

Լիայոյս եմք նոյնպէս, զի գերապատիւ առաջնորդք, Յանձնաժողովք Եղբայրական Օգնութեան, ազգային գործիչք մեր, բարեգործք եւ կարողատրք յամենայն կողմանց փութով օժանդակեսցեն նուիրատութեամբք իրեանց վասն դժբաղդ գաղթականաց մերոց:

Աղօթեմք առ Աստուած վասն փրկութեան ազգիս հայոց լամենայն  
վտանգից եւ ի փորձութեանց:

Ողջ լերութ, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ օրհնեալ ի մէնջ. Ամէն:  
Ի վերայ իսկականին ստորագր.

ԳԷՈՐԳԵ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 28 դեկտեմբերի 1914 ամի,

ըստ տոմարիս Ռ.Յ.Կ.Դ.

ի հայրապետութեան Մերում Գ ամի

Արարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի ՎԱՂԱՐԾԱՊԱՏ

Թ. 1990

